ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4407-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի Հ.5530-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 21.07.2025 թվականի եզրակացությունը, ըստ օրենքի 22.03.2024 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը և քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2009թ. մայիսի 29-ի «Շրջանցիկ թունելի հ.8 բնակելի տան նկատմամբ Վարսենիկ Աշոտի Խռիկյանի, Հրաձիկ Ղազարոսի Ղազարյանի գույքային իրավունքները վերականգնելու, 229.17քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.5530-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 3-րդ կետում՝ «իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով.

2) Որոշման վերնագրից, նախաբանից, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերից հանել «Հրաձիկ Ղազարոսի Ղազարյանի» բառերը.

3) Որոշման նախաբանից հանել «Հրաձիկ Ղազարոսի Ղազարյանի (ծնված 27.03.1949թ.)» բառերը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ